# Մերի Քեյը բացում է Ռիչարդ Ռ. Ռոջերսի անվան նոր արտադրական - հետազոտական կենտրոնի դռները

## *Ամենահայտնի կոսմետիկ ընկերություններից մեկը կատարում է ավելի քան 100 միլիոն դոլարի ներդրում Հյուսիսային Տեխասում գտնվող նոր արտադրական-հետազոտական կոմպլեքսի կառուցման աշխատանքներում*

**Դալլաս, Տեխաս, (Նոյեմբերի 1, 2018) –** Mary Kay ընկերությունը հայտարարում է նոր արտադրական-հետազոտական կենտրոնի բացման մասին, որը տեղակայված է Լյուիսուիլում, Տեխասում և կրում է Ընկերության համահիմնադրի՝ Մերի Քեյ Աշի որդու՝ Ռիչարդ Ռ. Ռոջերսի անունը: Ռիչարդ Ռ. Ռոջերսի անվան նոր արտադրական-հետազոտական կենտրոնը բավարարում է կոսմետիկ ընկերության պահանջները կապված մաշկի խնամքի միջոցների, դեկորատիվ կոսմետիկայի և օծանելիքների արտադրման հետ, որ ստեղծվում են գրեթե 40 երկրների Mary Kay–ի միլիոնավոր անկախ խորհրդատուների համար և Mary Kay բրենդի բոլոր սիրահարների համար ամբողջ աշխարհում:

Անցկացնելով մանրակրկիտ վերլուծություն կապված Տեխասում կառուցապատման համար հարմար տարածքի հետ՝ Mary Kay ընկերությունը սկսեց կենտրոնի շինարարական աշխատանքները 2016 թվականի սեպտեմբերի 13-ին՝ ուղիղ 53 տարի անց այն օրվանից, երբ Մերի Քեյ Աշը ստեղծեց երազանքների իր Ընկերությունը՝ բացելով մի փոքր խանութ Դալլասում: Կենտրոնի ներդրումները գերազանցում են 100 միլիոն դոլարը, այն ավելի քան 42 000 քառակուսի մետր տարածք է զբաղեցնում: Այն իր մեջ ներառում է ժամանակակից գիտահետազոտական լաբորատորիաներ և հզոր արտադրամասեր՝ հիմնված առաջատար տեխնոլոգիաների վրա: Գիտահետազոտական կենտրոնը կգործի անթափոն արտադրության հիմունքներով:

«Ռիչարդ Ռ. Ռոջերսի անվան նոր արտադրական-հետազոտական կենտրոնի բացումը շատ մեծ կարևորություն ունեցող քայլ է մեր Ընկերության 55 տարվա պատմության մեջ», - ասաց Դեյվիդ Հոլլը՝ Mary Kay ընկերության նախագահն ու գլխավոր կառավարիչը: – «Տվյալ պահին մեր բիզնեսի մոտ 75%-ը վարվում է այլ երկրներում և ամերիկյան գործարանում արտադրվող Mary Kay-ի արտադրանքի ավելի քան 50%-ը ուղարկվում է մեր միջազգային մասնաճյուղեր: Նոր արտադրական-հետազոտական կենտրոնը, որը նորամուծությունների ոլորտում առաջատար է, մեզ հնարավորություն կտա ներկայումս շարունակել հիանալի արտադրանքի ստեղծումը և հիմքեր կստեղծի երկարաժամկետ զարգացման համար ապագայում»:

Որպեսզի նշվի P3 կենտրոնի բացումը, Mary Kay-ի բարձրագույն կառավարման մարմինը, կառավարության ներկայացուցիչներ, Cymcor (նախագծերի կառավարում) և Beck (կառուցապատում) ընկերությունները հավաքվել էին ժապավենի կտրման պաշտոնական արարողությանը: Arbor Day ֆոնդի հետ համագործակցության և «Վարդագույնը հանուն էկոլոգիայի» նախաձեռնության շրջանակում հայտնի կոսմետիկ ընկերությունը P3 կենտրոնի կենտրոնական հատվածում տնկել է իր միլիոնանոց ծառը: Բացի այդ Texas New Mexico Power –ի հետ համագործակցության շրջանակներում Mary Kay ընկերությունը 50 000 դոլարի չեկ է փոխանցել «Դենթոն շրջանի ընտանիքի ընկերներ» կազմակերպությանը, որը տարածաշրջանում միակ Դենթոն կազմակերպությունն է և օգնություն և կացարան է առաջարկում ընտանեկան և/կամ սեռական բռնության ենթարկված անձանց:

Հավատարիմ մնալով Լյուիսուիլի բնակիչներին օգտակար լինելու ձգտմանը՝ Mary Kay-ը հայտարարեց Լյուիսուիլի անկախ դպրոցական միության հետ տասնամյա

համագործակցության մասին, որի շրջանակներում կկազմակերպվի գործարարության ուսուցում Լյուիսուիլի ավագ դպրոցականների համար: Օգտվելով ողջ երկրում արդեն հայտնի դարձած Incubatoredu ծրագրից դպրոցականները կուսումնասիրեն առնտրային գործունեության կազմակերպչական մոդելները, իսկ բիզնեսի տեղական առաջատարները նրանց համար կդառնան ուսուցիչներ և թրեյներներ:

«1963 թվականին իմ տատիկն ու հայրը հիմնադրեցին այս Ընկերությունը Դալլասում և մենք հպարտանում ենք, որ կարողանում ենք շարունակել մեր ներդրումն ունենալ հյուսիսային Տեխասի կյանքում», - ասել է Ռայան Ռոջերսը` Mary Kay Ընկերության ներդրումային գծով գլխավոր կառավարիչը` Ռիչարդ Ռ. Ռոջերսի որդին և Մերի Քեյ Աշի թոռը: – « Ռիչարդ Ռ. Ռոջերսի անվան նոր արտադրական-հետազոտական կենտրոնը ներդրում է ոչ միայն մեր ընկերության ապագայի համար, այլ նաև ողջ աշխարհի կանանց կյանքը բարելավելու մեր առաքելության համար»:

Ընկերության նախորդ արտադրական-հետազոտական կենտրոնը բացվել էր Դալլասում` Ռիգալ Ռոյում, 1969 թվականին: Ներկայումս Mary Kay® ընկերությունն ունի ավելի քան 600 աշխատակից, ովքեր զբաղվում են արտադրությամբ և գիտական հետազոտություններով: Ընկերությունը միլիոնավոր դոլարների ներդրումներ է կատարում հետազոտությունների և զարգացման ոլորտներում, որպեսզի Mary Kay®-ի արտադրանքը համապատասխանի անվտանգության, որակի և արդյունավետության բարձրագույն չափանիշներին: